

ու չարչարանքի սարսափելի արհաւիրքն իրան պատել, պաշարել էին, ու իւր սիրտը մահուան երկիւղ ընկնելու չափ տըխրել էր, իւր տրամուծիւնիցն էլի չմոռացաւ իւր սրտի սիրելիներին՝ իւր աշակերտներին: Կրկին ու կրկին անգամ գնաց նրանց մօտ ու յորդորում էր այս խօսքերովս « արևոն կայէ՛ + և աղօթ + արէ՛, որ փայտ-լեռն ձեզ ղընկէ՛ + » : Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար:

Աշխարհիս Փրկչի ձայնը՝ Գէթսէմանէի գիշերուան տուանձնութիւնից միշտ էլ գալիս, հասնում է ականջիս, թէւ գարեր են անց կացել նորա բերնից դուրս եկած այս խօսքերի վրայ: Թող այդ ձայնը զօրաւոր կերպով ազդի, թափանցի սրտիս մէջ՝ իմ կեանքիս էլ փորձութեան ամեն ժամերում: Նրբ որ սրտիս ամեն զգացումներն այնպէս բարձրւում են, որ նրանց սաստկութեան անաջ հազիւ կարող եմ կանգնել, գէ՛մ գնել, որ չյաղթուիմ, Փրկչիս այն ձայնը թէ՛ « արևոն կայ և աղօթ + արա՛ », լուրջ կերպով ինձ կրկին զգաստութիւն տայ:— Քեզ կհնազանդեմ, ո՞վ իմ Փրկիչ: Պարգեւիր ինձ Քո հոգւոյդ իմաստութեան և զօրութեան շնորհը:

(Թարգմ. Գ. Ն. Ա.)

Ընդհանրական եկեղեցու կազմակերպութիւնն, որ տուել են նրան տիեզերական ժողովներն և նորա խանգարումն պապականութեան մէջ:

Պապականք և լատինասէր յունագաւառնք, յափշտակուած քրիստոնէական բոլոր եկեղեցեաց միութեան գաղափարով Հռովմայ պապի գլխաւորութեամբ, կարծում են, թէ աշխատում են իրագործելու նախկին ընդհանրական ժողովների ժամանակուան ընդհանրական եկեղեցու գաղափարը: Այսպիսիք շատ սխալւում են, որովհետեւ ընդհանրական կաթողիկէ եկեղեցու նախկին եկեղեցական կազմակերպութեան հիմունքն

եղած են հետեւեալները. ազգային եկեղեցեաց գոյութիւնը, «սոս-
խմբութիւն»-ը թէ ասեմի կենդանիներէ (պարբերաբարութեանց, հայրապետա-
բեանց) շարքը և նոյա միութիւնը իրանց վարչական ներկայացուցիչներէ
յարաթերսութեամբ միեանց հետ և ընդհանրական ժողովներէ հաստատութե-
անցը իւրաքանչիւր: Իսկ պապականութեան հիմունքներն են ազ-
գային եկեղեցեաց գոյութեան և անկախութեան օրհանգումն և
եկեղեցու բազմամեծամ մարմնոյ ձուլումն մի անգամի մէջ և
կամ աւելի ճիշդ է ասել նորա սլոյնացումն պապի անձնա-
ւորութեան մէջ:

Պապութեան մէջ քրիստոնէական եկեղեցեաց միութեան
գաղափարից յափշտակուող պապամոլներ շատ կան եւ յոյն
եկեղեցու անդամներից, որոնցից մէկը Վ. Սուրիկով իւր
«Ռուս իդէա» տետրի մէջ, որ Փարիզում հրատարակել է,
չափազանցութեան է հասցնում իւր գաղափարած ընդհան-
րական մի եկեղեցու գաղափարի մէջ և մինչև անգամ ան-
ներելի ռճով խօսում իւր մայրենի ռուս եկեղեցու մասին:

Սրան պատասխանելով Հ. Վ. Գէթէն ի միջի այլոց գրում է.

«Ձեր կարծիքով, Պ. Սուրիկով, ազգային եկեղեցիք պէտք է
ձուլվեն մի մեծ ամբողջութեան մէջ, որ դուք անուանում էք
ընդհանրական եկեղեցի: Այդպիսի ընդհանրական եկեղեցի,
որպիսին դուք երևակայում էք, երբեք գոյութիւն ունեցած
չէ. բացի սրանից ձեր եկեղեցական վարչութեան տեսութիւնը
բոլորովին հակառակ է եկեղեցու աստուածային կազմակեր-
պութեան, որ տուած է նրան ընդհանրական ժողովներից:
Քրիստոնէութեան սկզբնական ժամանակներում զանազան
եկեղեցիք խմբուում էին զանազան կենդրոնների շուրջն, որոնք
լուսատու աղբիւրներ էին, ուստի բոլորում և տարածուում էր
ճշմարիտ հաւատը: Ժամանակի ընթացքում այդ եկեղեցիք
սկսան ձգտել բաժանուելու կենդրոններից: Այս մասին առա-
ջին ընդհանրական ժողովում խնդիր զարթեցրեց Ալէքսանդ-
րիոյ նշանաւոր առաքելական եկեղեցին: Ժողովը հաստատեց
այն առաքելական եկեղեցու իրաւունքներն այն եկեղեցեաց վե-
րայ, որոնք մայր եղած էր: Սուրբ ժողովը իւր վճիռը հիմնեց
սովորութեան վերայ և վկայեց, որ այն սովորութիւնը գոյու-

թիւն ունէր և այլ եկեղեցիներում, մասնաւորապէս Հռովմայ եկեղեցում, որ մայրաքաղաքի իրաւունքներ էր վայելում վերաբերութեամբ տեղական եկեղեցեաց, որոնք նրանից ստացել էին իրանց առաքելական վարդապետութիւնը: Այս վճիռը եղաւ հիմն եկեղեցական կազմակերպութեան: Մեծ առաքելական կենդրոններն, որպիսիք էին Անտիոք, Հռովմ, Եփեսոս, Գարձան կենդրոնական եկեղեցիք: Եկեղեցու վարչական կազմակերպութեան օրինակն առնուեցաւ պետականից, Հռովմայ կայսերութիւնն ունէր երեք մայրաքաղաք. Հռովմ արեւմուտքի համար, Աղէքսանդրիա Եգիպտոսի համար. Անտիոք Ասիայի համար: Երուսաղէմն, որոյ հետ կապուած էին շատ կրօնական յիշատակներ, նոյնպէս ի շարս մայր քաղաքաց համարուեցաւ: Իսկ երբ Կ. Պօլիսը Գարձաւ կայսերութեան երկրորդ մայրաքաղաք, սորա հպիսկոպոսն էլ, ըստ սրոշման երկրորդ ընդհանրական Ժողովի, համբարձաւ երկրորդ կարգի հպիսկոպոսների շարքը: Ցակաւ առ տակաւ միւս առաքելական եկեղեցիք ձուլուեցան մեծ կենդրոնների մէջ, որոց հպիսկոպոսները պատրիարք կոչուեցան: Բայց և այնպէս մի քանի եկեղեցիք պահպանեցին իրանց անկախութիւնն, այսպիսի էր Ափրիկականն, որ խմբուեցաւ Կարթագինէի հպիսկոպոսի շուրջը, որ չկրելով պատրիարք անուանը, վայելում էր սորա բոլոր իրաւունքները: Բացի սրանից եկեղեցիք, որոնք գտնուում էին արտաքոյ Հռովմէական կայսերութեան, այլ անկախ պետութեանց մէջ, կազմեցին առանձին աղգային եկեղեցիք. այսպէս ամեն պետութիւն ունէր իւր անկախ եկեղեցին, մինչև անգամ պատրիարքութիւններից կախումն ունեցող եկեղեցիք վայելում էին որոշեալ աստիճանի անկախութիւն: Այսպէս Քաղղլիական եկեղեցին մինչև ներկայ դարուս կէսը մարտնչում էր իւր աւանդութեանց և իւր ազատութեան համար, մինչև որ ի վերջոյ ընկճուեցաւ, գէթ ըստ երեւութի:

Այսպիսի էր ընդհանրական եկեղեցու կազմակերպութիւնն, ըստ որոշման ընդհանրական Ժողովոց:

Դուք, Պ. Սողովել, հակառակ էք այս յարգելի և յոյժ օգտակար կազմակերպութեան, ցանկալով բոլոր եկեղեցիք ձուլել

մի կենդրոնի՝ Հռովմի մէջ։ Ընդհանրական ժողովները ձեռնարկում էին, որ ընդհանրական եկեղեցին կազմուէր շատ անկախ եկեղեցիներից, իսկ դուք վճռում էք, որ այս կազմակերպութիւնը սխալ է և որ բոլոր եկեղեցին պէտք է հաստակեցնել մի անսխալական գլխի։ Միթէ կարծում էք թէ դուք իրաւունք ունիք հակառակելու նախնական եկեղեցու այս մեծ և օգտաւէտ կազմակերպութեան, որ հաստատուած է ընդհանրական ժողովներից։ Հերիք պիտի լինէր պարզ հայեացքն եկեղեցեաց ներկայ վիճակի վերայ, որ դուք համոզուէիք, թէ սխալուում էք։

Արեւելքում եկեղեցիք մնացին իրանց նախնական դրութեան մէջ և պահպանեցին ուղղափառութիւն. իսկ արեւմուտքում հռովմայ պատրիարքները ներելի և աններելի միջոցներով հասան իրանց նպատակին, ընկճեցին իրանց իշխանութեան ներքոյ բոլոր արեւմտեան եկեղեցիքը, որոնք կորցրին իրանց ուղղափառութիւնը, ոմանք Բողոքականութիւնը, միւսները Լուտերականութիւնը, և այլք ընդունելով այդ պահանջներն ու մոլորութիւնները, եւ յիշատակեցան առանց Ս. Գրիգոր մեծի եւ Եկեղեցիի կենդրոնական (կերպարանաւոր) թեկնածուական անշահաւորութեան մէջ, որոնք հետոյ իւրեք է ընկնել և Եկեղեցին։ Հէնց այսպէս էլ եղաւ. Հռովմի եպիսկոպոսները կլանեցին արեւմտեան եկեղեցին և սա նոցա հետ միասին ընկղմեցաւ շատ հերձուածներին մէջ։

Արեւելքում այսպէս լինիլ չէր կարող։ Ամեն եկեղեցիք, միացած հաւատով եպիսկոպոսների հսկողութեամբ, գտնուում էին յարաբերութեանց մէջ միմեանց հետ, պահպանելով իրանց անկախութիւնը։ Եթէ մէկը ընկնէր որ և է մոլորութեան մէջ, միւսները հսկում էին և գիմադրում նրան։

Ձանազան եկեղեցեաց անկախութիւնը գրաւական է և երաշխաւոր ուղղափառ վարդապետութեան պահպանութեան. ուրիմն և նա է հաստատուն հիմն միութեան հաւատոյ։

— Իրաւացի են հայր Վ. Գեթէի խօսքերը. քրիստոնէական եկեղեցու միութիւնը ի Գրիստոս է, որ է նորա միակ գլուխն. իսկ բազմաթիւ անկախ ազգային եկեղեցիք նորա անդամներն

են, միայն չեն որա ուղղափառ վարդապետութեան դաւանութեամբ: Իսկ պապամոլների երեւոյցած տեսանելի միութիւնը բոլոր եկեղեցեաց պապի գլխաւորութեան մէջ ոչ միայն երազ է, այլ և վնասակար ու հակառակ Քրիստոսի վարդապետութեան: Ի՞նչ պիտի լինէր Փրկչի եկեղեցու վիճակն, եթէ յիշուի պապամոլների և եկեղեցու տեսանելի միութեան նախանձախնդիր անձանց երազն իրագործուած լինէր, բոլոր ազգային եկեղեցիք ձուլուէին կաթոլիկ եկեղեցու մէջ, պապի գլխաւորութեամբ: Արդեօք կաոտարուած չէին լինիլ Ս. Գրիգոր Մեծի խօսքերը, որ ասում է, եթէ Քրիստոսի եկեղեցին կենդրոնանայ մի եպիսկոպոսի անձնաւորութեան մէջ, սորա հետ կարող է ընկնել և նոյն իսկ սուրբ եկեղեցին: Եթէ այսօր բոլոր եկեղեցեաց տեսանելի միութեան նախանձախնդիրներին երազը կատարուած լինէր, արդեօք քրիստոնէական եկեղեցին ունենալով իրան միակ գլուխ Հռովմայ պապին, թողած աստուածապաշտութիւնը մարդապաշտութիւն դաւանած չէ՞ր լինիլ, ճանաչելով պապի անսխալականութիւնն, որ անհեթեթութիւն է, ոչ միայն հակառակ է Փրկչի Աստուածային վարդապետութեան այլ և մարդկային տկար մտաց դատողութեան էլ:

Հայոց եկեղեցին, որ արեւելեան անկախ առաքելական կենդրոնական եկեղեցիներից մէկն եղած է և է ըստօրում նորա պատրիարքին ենթարկուում էին մի քանի ազգային եկեղեցիք (Վրաց, Աղուանից և այլ ազգաց), միշտ պահպանել է քրիստոնէական եկեղեցու այն կերպարանքն, որ ստացել է նա առաքելաների և սոցա յաջորդների կարգադրութեանց հիման վերայ: Նա պահպանելով ուղղափառ վարդապետութիւնը Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, միակ գլուխ քրիստոնէական եկեղեցու դաւանած է Նրան, որ իւր եկեղեցու մասերը Հոգւոյն սրբոյ շնորհիւ ի ձեռն եպիսկոպոսաց կառավարում է: Հայաստանեայց եկեղեցին, ըստ նախնի սուրբ հարց, քրիստոնէական եկեղեցու ընդհանրականութիւնը տեսնում է ազգային եկեղեցեաց դաւանած վարդապետութեան ճշմարտութեան մէջ, այդ եկեղեցեաց իրար հետ ունեցած եղբայրական

սիրալիր յարաբերութեան մէջ. եկեղեցեաց մէջ թագաւորող
 սէրն է, որ կապելով նրանց անքակտելի կապերով, կազմում է
 նրանցից մի ընդհանրական եկեղեցի, որոյ միակ գլուխն է ինքն
 Քրիստոս: Ինչպէս որ Քրիստոս Աստուած գլուխն եկեղեցւոյ
 անտեսանելի է, հոգի է, նոյնպէս և եկեղեցւոյ ընդհանրակա-
 նութիւնը հոգւոր է, անտեսանելի է, և ոչ մարմնաւոր:

Հայ եկեղեցու հոգին այս է, որ ամեն օր աղօթում է ան-
 խտիր վասն ամենայն քարեպաշտ թագաւորաց և իշխանաց և
 վասն ամենայն քրիստոնէից: Եթէ բոլոր քրիստոնէական եկե-
 ղեցիք Հայ եկեղեցու սոյն հոգին կրէին և Աստուածային սիրով
 կապուած լինէին, որոյ արտայայտիչ ք պիտի լինէին փոխադարձ
 օգնութիւնը, փոխադարձ պաշտպանութիւն և միմեանց կար-
 եաց լրացումն. քրիստոնէական վարդապետութիւնն այսօր
 բոլոր երկրագնդիս տիրապետած կլինէր: Բայց ի՞նչ ենք տես-
 նում քրիստոնէական եկեղեցեաց յարաբերութեանց մէջ, եթէ
 ոչ հալածանք միմեանց դէմ, ոտնաձգութիւնք իրեւաց անկա-
 խութեան դէմ. ձգտումն յափշտակելոյ միմեանցից նոցա ան-
 դամներին ամեն ներելի և աններելի միջոցներով, բռնու-
 թեամբ, խաբեբոյութիւնով, կարօտներին կաշառելով ոսկով,
 արծաթով, հողով և այլ խոստումներով սնտաի փառաց ու
 պատուոյ: Արդեօք քրիստոնէական եկեղեցեաց այս թշնամա-
 կան յարաբերութեանց արդիւնք չէ՞ր մահմետականութեան
 ծագումն, որ մարդկութեան մի նշանաւոր մասը ծառայեցրեց
 իւր վարդապետութեան, կորզելով նրան քրիստոնէութիւնից:
 Արդեօք քրիստոնէական եկեղեցեաց այս թշնամական յարաբե-
 րութիւնք չէ՞ն պատճառ, որ կարծես զրկում են նրանց Հոգե-
 ւոյն Սրբոյ շնորհքից և թլացնում են նոցա բոլոր ճիգերը ան-
 հաւատների մէջ Փրկչի փրկարար վարդապետութիւնը տարա-
 ծելու: Զէ՞ որ այսօր քաթոլիկ, բողոքական և այլ եկեղեցիք
 մեծամեծ ճիգ և ահագին միջոցներ գործ են դնում իրանց
 վարդապետութիւնը հեթանոսաց և մահմետականաց մէջ տա-
 րածելու համար և ըստ մեծի մասին ձեռնոռնայն են մնում:
 Այսպիսի թշնամական յարաբերութեանց շարքում չէ՞ դառելի
 արդեօք, որ մի տարի առաջ Հռովմայ պապը ոտնաձգութեամբ

Հայաստանեայց առաքելական եկեղեցու անկախութեան պէմ, հրաւիրում էր նրան ենթարկուիլ իւր իրաւասութեան, կոչելով նրան հերձուածող և ապստամբ, մինչդեռ պարզ պիտի լինէր նորա համար թէ հայ եկեղեցւոյ ուղղափառութիւնն և թէ նորա առաքելականութիւնն, որ այնքան հին է, որքան և այլ առաքելական եկեղեցեացը: Այսօր իսկ Հռովմայ և այլ եկեղեցեաց արքանեակներն ամեն ներելի և աններելի միջոցներով և ինքնաստեղծ խաբէրայական հնարներով պառակտում են հայ եկեղեցու հօտը: Մի եկեղեցւոյ միւս եկեղեցուց ժողովուրդ խլելը, միամիտներն ու դիւրախաբ կարօտեալները դրամով, խոստումնեցով և սնտոխ բաներով մտրեցնելը, փողով հաւատ գնել է, Քրիստոսին կրկին ի խաչ հանել է, հաւատափոխութեան վարժեցնելով նորա հետեւողներին: Խաբէրայութեամբ մի եկեղեցու միւս առաքելական եկեղեցուց հօտ որսալն ոչ միայն Քրիստոսի Քրկչի վարդապետութեան հակառակ է և սրբապղծութիւն է, այլ և խախտիչ ու աւերիչ է Ս. եկեղեցւոյ այն անուեսանելի ընդհանրականութեան—միութեան գաղափարի, որը տեսանելի կացուցանել ճգնում են պապամուկներն և Սոլովեյններն ու սոցա նմաններ: Թող դոքա փոխանակ քրիստոնէական անկախ եկեղեցիքը հրաւիրելու յանիրադործելի տեսանելի միութիւն Հռովմի պապերի իշխանութեան ներքոյ, քարոզեն նրանց սէր և եղբայրական յարաբերութիւն և ձեռնուուութիւն միմեանց առանց անձնական շահադիտական ակնկալութեանց, և սուրբ եկեղեցւոյ անտեսանելի ընդհանրականութիւնը—միութիւնն ինքն ըստ ինքեան բոլոր անդամների սիրոյ շաղկապով միանալովը առաջ կգայ, ունելով իրան գլուխ իւր Հիմնադրին՝ Յիսուս Քրիստոսին: Այն ժամանակ Հոգւոյն սրբոյ շնորհքն էլ առատութեամբ կզեղանի քրիստոնէական եկեղեցեաց վերայ, որոնց ընդհանուր ջանքով և ճգամբ Քրկչի վարդապետութիւնն էլ շուտով տիրապետող կդառնայ աշխարհս երեսին ի փրկութիւն դեռ ևս նրանից զուրկ մնացած մարդկութեան մեծամասնութեան:

Քրիստոնէական եկեղեցւոյ միութիւնն այս ընթացքի և դիրքի մէջ է և ոչ թէ Քրիստոսի անդամների Հռովմայ պապե-

րի գերիշխանութեան հնազանդելու մէջ, որ մարդասպաշտութիւն է և աստուածամարտութիւն:

Ահա այսպիսի մեծ տարբերութիւն կայ հայ եկեղեցու և քաթոլիկ եկեղեցու հայեցուածքների ու ուղղութեան մէջ վերաբերութեամբ քրիստոնէական սուրբ եկեղեցու ընդհանրականութեան: Պապամուկները խախտում են Ս. եկեղեցու իսկական ընդհանրականութիւնն, երազելով հաստատելու այն պապի անձնաւորութեան մէջ, իբրեւ հաստատուն վիճի վերայ: Իրաւ որ, ասենք Ս. Պօղոսի խօսքերով. Նորա շահագրգիռ է խորհուրդն էրեանց և խաւրէցան անմարմնէամբ «Երբ և շահագրգիռ է խորհուրդն էրեանց և խաւրէցան անմարմնէամբ» յիմարացան և ժողովին դիմանալէն Աստուծոյ (այս դէպքում մի, սուրբ կաթոլիկէ և առաքելական եկեղեցւոյ) է շահանալէն պապելի էլ ծանելի մարդոյ . . . երբ ժողովանալէն ղեկարարութիւնն Աստուծոյ ընդ աստուծան, հնազանդեցան և պաշտելին դարարած և ոչ դարարելն, որ է օրհնեալ յաւիտեան, ամեն (Հով. Ա. 21, 22, 23, 25):

(Որ. Вѣст.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Միակն աստուծանալէն:

Վեհափառ Հայրապետի հաստատած նոր ծրագրում ցոյց է տուած այն վերջնական արդիւնքը, որ ծխական ուսումնարաններում հայերէն լեզուի պատասխանալից պահանջուած է: Ուսուցիչը ինչ ճանապարհ էլ որ ընտրէ նոյն նպատակին դիմելու համար, բայց և այնպէս պէտք է գիտենայ, թէ իրանից նախ և առաջ կը պահանջուի, որ նոյնքան արդիւնք ցոյց տայ: Այս տեղ պէտք է նկարագրուի դաստատուութեան վիճակը,